

Սպանության կատարման եղանակը որպես առանձին դաժանությանը կատարված սպանության օբյեկտիվ հատկանիշ

Բաղդասարյան Մ. Ռ.

*ՀՀ իրավունքի և քաղաքականության ինստիտուտի քրեական իրավունքի և քրեական
դատավարության իրավունքի ամբիոնի հայցորդ (Երևան, Հայաստան)
mariam.baghdasaryan.1992@mail.ru*

Հիմնաբառեր՝ դաժանություն, առանձին դաժանություն, օբյեկտիվ կողմ, ֆակուլտատիվ հատկանիշ, կատարման եղանակ, միջոց, գործիք, արժանապատվություն, անարգանք, ստորացում, նվաստացում, ծաղրուծանակ, տանջանք, ստառապանք:

Способ совершения убийства как объективный признак убийства, совершенного с особой жестокостью

Багдасарян М. Р.

*Соискатель кафедры уголовного права и уголовно-процессуального права Института права и
политики РАУ (Ереван, Армения)
mariam.baghdasaryan.1992@mail.ru*

Аннотация. Со второй половины XIX века до наших дней проблемы, связанные со способом совершения преступления, были предметом изучения многих ученых-юристов. Являясь факультативным признаком объективной стороны преступления, способ совершения преступления, получив закрепление в диспозициях многочисленных статей особенной части Уголовного кодекса, в уголовно-правовом смысле приобретает характер обязательного признака состава преступления, зачастую также выступает в квалифицирующего признака. Таким образом, в связи с тем, что он закреплен или не закреплен в диспозиции статьи особенной части Уголовного кодекса, способ совершения преступления приобретает в одном случае характер обязательного признака преступления, в другом случае – характер факультативного признака.

Метод совершения преступления – это инструменты, действия, приемы и методы, которые преступник использует или пытался использовать для совершения преступления. Особая жестокость всегда связывается с способом совершения преступления и наступившими последствиями. Способ совершения – одна из черт объективной стороны особо жестокого убийства, основная черта преступлений такого характера.

Существует множество способов, характеризующих жестокость, и перечислить их исчерпывающим образом представляется невозможным. Способ совершения убийства зачастую явно свидетельствует об особой жестокости, проявленной лицом, совершившим преступление, в результате чего потерпевшему причиняется невыносимо сильное, длительное физическое или психическое страдание. Например, сжечь человека заживо, похоронить человека, бросить его в кипящую воду, запереть в высокотемпературной сауне и держать в холодильнике – отдельные формы жестокости, которые демонстрируют жестокость, безжалостность, жестокость, невыразимую жестокость преступника. Убийства, совершенные такими бесчеловечными и унижающими достоинство способами, подлежат квалификации как убийства, совершенные с особой жестокостью. Однако Верховный суд разъяснил в своих постановлениях о практике убийств, что особая жестокость связана как с тем, как было совершено убийство, так и с обстоятельствами, указывающими на особую жестокость преступника. Верховный суд также постановил, что для квалификации деяния как убийства, совершенного с особой жестокостью, необходимо установить намерение преступника убить жертву с особой жестокостью.

Таким образом, в связи со способом совершения убийство считается совершенным с особой жестокостью, когда виновный, лишая потерпевшего жизни, одновременно умышленно причиняет последнему или его близким дополнительные, сильные, длительные физические и (или) психические страдания, не обязательные для наступления последствия в виде смерти и находящиеся за его пределами.

Ключевые слова: жестокость, особая жестокость, объективная сторона, факультативный признак, способ совершения, средство, орудие, достоинство, оскорбление, унижение, высмеивание, мучение, страдание

The manner in which the murder was committed as an objective feature of the murder committed with a particular cruelty

Baghdasaryan M. R.

*Applicant for the Department of Criminal Law and Criminal Procedure Law of the Institute of Law
and Politics of RAU (Yerevan, Armenia)
mariam.baghdasaryan.1992@mail.ru*

Abstract. From the second half of the 19th century to the present day, problems related to the method of committing the crime have been the subject of study of many jurists. Being an optional feature of the objective side of the crime, the

method of committing the crime is fixed in the provisions of many articles of the special part of the Criminal Code, acquires the nature of a mandatory feature of the crime, often it is a feature that qualifies the crime. Thus, due to the fact that it is fixed or not fixed in the disposition of the article of the special part of the Criminal Code, the method of committing the crime acquires in one case the nature of a mandatory feature of the crime, in other case the nature of the optional feature.

The manner in which a crime is committed are the tools, actions, tricks and methods that the offender uses or has attempted to use to commit a crime. Particular cruelty is always associated with the manner in which the crime was committed and with the emerging consequence. Execution method is one of the features of the objective side of a particularly cruel murder, the most basic feature of crimes of this nature.

There are many ways to describe particular cruelty, and it is impossible to list them exhaustively. The manner in which the murder was committed is often a clear indication of the particular cruelty shown by the perpetrator, which results in the victim suffering unspeakably severe, physical or mental suffering. For example, burning a person alive, burying a person, throwing him in boiling water, locking him in a high-temperature sauna, and keeping him in the refrigerator are separate forms of cruelty, which show the ruthlessness, cruelty, unspeakable violence of the perpetrator. Murders committed in such inhuman and degrading ways are subject to classification as separate acts of cruelty.

However, the Supreme Court clarified in its Murder Practice rulings that individual cruelty was linked to both the manner in which the murder was committed and the circumstances that indicated the particular cruelty of the perpetrator. The Supreme Court also ruled that in order to qualify the act as a murder committed with a certain cruelty, it is necessary to find out the intent of the criminal to kill the victim with a particular cruelty.

Thus, due to the manner of execution, murder is considered to be committed with a certain cruelty, when the perpetrator, by depriving the person of life, at the same time deliberately causes him or her or her relative to die, not necessarily for the occurrence of death, separate, additional, strong, severe physical violence or mental suffering.

Keywords: cruelty, separate cruelty, objective side, facultative feature, method of performance, means, tool, dignity, insult, humiliation, ridicule, torment, suffering.

Հանցագործության կատարման եղանակի դերին և կարևորությանը դեռևս 19-րդ դարի երկրորդ կեսին անդրադարձել են հայտնի ռուս իրավագետներ Ի. Յա. Ֆոյնիցկին, Ն.Ս. Տազանցևը, Է.Օ. Կոլկոլովը և այլոք: Սովետական քրեական իրավունքի ձևավորման և հետագա զարգացման ընթացքում հանցագործության կատարման եղանակին առնչվող խնդիրները շարունակել են մնալ իրավաբան գիտնականների ուշադրության կենտրոնում, իսկ 1950-ական թվականներից սկսած այն հանդիսացել է հայտնի իրավագետներ Ա.Ն. Տրայնինի, Օ.Ռ. Յակուբովիչի, Վ.Ն. Կուդրյավցևի, Մ.Վ. Շկելեյի, Ն.Ֆ. Կուզնեցովայի, Գ.Ի. Չեչելի, Ս.Ն. Դրուժկովի, Ն.Ի. Պանովի, Ա.Վ. Նաումովի, Ա.Ի. Բոյցովի, Ա.Ս. Միխիլինի և այլոց ուսումնասիրության առարկան:

Քրեական իրավունքի տեսության մեջ հանցագործության կատարման եղանակը ընդունված է դասել հանցագործության օբյեկտիվ կողմի ֆակտուալատիվ հատկանիշների թվին:

Այսպես, Ա.Ն. Տրայնինի կարծիքով հանցակազմի օբյեկտիվ կողմի ֆակտուալատիվ հատկանիշների թվին են դասվում՝ ոտնձգության առարկան, գործողության եղանակը, տեղը, ժամանակը, իրավիճակը [1, էջ 79]: Այլ հեղինակներ դրան ավելացնում են նաև հանցագործության կատարման միջոցներն ու գործիքները [2, էջ 52], իսկ այլոք՝ հանրորեն վտանգավոր հետևանքները, ինչպես նաև արարքի ու հետևանքի միջև եղած պատճառական կապը՝ որպես օբյեկտիվ կողմի պարտադիր հատկանիշ համարելով միայն հանրորեն վտանգավոր արարքը:

Վ.Ն. Կուդրյավցևը նույնպես գտնում է, որ հանցավոր արարքի էական բնութագրիչներն են՝ հանցագործության կատարման եղանակը, տեղը, ժամանակը, կատարման իրավիճակը, սակայն միաժամանակ նշում, որ նրանք հանցակազմի օբյեկտիվ կողմի ինքնուրույն հատկանիշներ չեն, որքանով որ բնութագրում են միայն հանցավոր արարքը (գործողությունը կամ անգործությունը), այսինքն՝ հանրորեն վտանգավոր արարքի արտաքին կողմը [3, էջ 10]:

Չնայած հանցագործության օբյեկտիվ կողմի ֆակտուալատիվ հատկանիշ հանդիսանալուն, հանցագործության կատարման եղանակը քրեական օրենսգրքի հատուկ մասի բազմաթիվ հոդվածների դիսպոզիցիաներում ամրագրում ստանալով, քրեաիրավական առումով ձեռք է բերում հանցակազմի պարտադիր հատկանիշի բնույթ, հաճախ նաև հանդիսանում՝ հանցավոր արարքը որակյալ դարձնող հատկանիշ:

Այսինքն՝ այն դեպքերում, երբ հանցակազմի ֆակտուալատիվ հատկանիշները անմիջականորեն նշված են քրեական օրենսգրքի հատուկ մասի դիսպոզիցիայում, նրանք տվյալ հանցագործության մեջ ձեռք են բերում հանցակազմի պարտադիր հատկանիշի բնույթ: Այսպիսով, պայմանավորված քրեական օրենսգրքի հատուկ մասի հոդվածի դիսպոզիցիայում ամրագրված կամ չամրագրված լինելուց, հանցագործության կատարման եղանակը ձեռք է բերում մի դեպքում՝ հանցակազմի պարտադիր հատկանիշի բնույթ, մյուս դեպքում՝ ֆակտուալատիվ հատկանիշի բնույթ: Օրինակ՝ շատերի կյանքի համար վտանգավոր եղանակով կատարված սպանու-

թյան դեպքում հանցագործության կատարման եղանակը հանցագործության պարտադիր կամ որ նույնն է՝ հիմնական, անհրաժեշտ հատկանիշ է, իսկ խուլիզանական դրդումներով կատարված սպանության դեպքում՝ հանցագործության կատարման եղանակը հանցակազմի ֆակտուտատիվ կամ որ նույնն է՝ ոչ պարտադիր, լրացուցիչ հատկանիշ է:

Հանցագործության կատարման եղանակը օբյեկտիվ կողմից արարքի արտաքին դրևորման այն ձևերն ու մեթոդներն են, որոնք հանցավորն օգտագործում է հանցավոր հետևանքի առաջացման համար: Այսինքն՝ հանցագործության կատարման եղանակը գործողությամբ կամ անգործությամբ կատարված հնարքների ամբողջությունն է, որոնք ուղղված են հանցավոր նպատակի իրականացմանը կամ ինչպես նշված է բացատրական բառարանում այն հանցագործության կատարման ժամանակ օգտագործվող գործողությունների համակարգ է:

Ինչպես նկատել է Օ.Ռ. Յակուբովիչը՝ հանցագործության կատարման եղանակը յուրաքանչյուր հանցագործությանը բնորոշ հանցակազմի օբյեկտիվ կողմի հատկանիշ է անկախ արարքի և մեղքի ձևից և իրենից ներկայացնում է հետևանքի առաջացմանն ուղղված համապատասխանաբար կատարվող հնարք կամ հնարքների համակարգ [4, էջ 9]:

Հանցագործության կատարման եղանակի մանրամասն ուսումնասիրումն ու վերլուծությունը կարևոր նշանակություն ունի ինչպես արարքի հանրորեն վտանգավորության աստիճանի բացահայտմանն ու որոշման, այնպես էլ հանցավորի անձի բնութագրման առումով:

Այն դեպքերում, երբ հանցավորը հնարավորություն է ունեցել ցանկալի հետևանքին հասնել ավելի պակաս վտանգավոր եղանակով, սակայն դրան հասել է առավել վտանգավոր եղանակով, ապա այդ որպես կանոն վկայում է նաև հանցավորի անձի առավել մեծ վտանգավորություն ներկայացնելու մասին:

Ինչպես նկատեցինք, **հանցագործության կատարման եղանակը այն ձևերն են, գործողությունները, հնարքները և մեթոդները, որոնք հանցավորն օգտագործում է կամ փորձում է օգտագործել հանցանք կատարելու համար:** Հանցագործության կատարման եղանակը ուղղակիորեն ազդում է հանցագործության հանրային վտանգավորության բնույթի և աստիճանի վրա: **Առանձին դաժանությունը մշտապես կապվում է հանցագործության կատարման եղանակի և առաջացած հետևանքի հետ:** Այսինքն, կատարման եղանակն առանձին դաժանությամբ կատարված սպանության օբյեկտիվ կողմի հատկանիշներից մեկն է, այդ բնույթի հանցագործություններով ամենաախիմնական հատկանիշը: Առանձին դա-

ժանությունը բնութագրող եղանակները բազմաթիվ են և նրանց սպառիչ թվարկումը հնարավոր չէ: Սակայն, **առանձին դաժանությամբ կատարված սպանության դեպքում նրանց բոլորի համար որպես ընդհանուր սեռային հատկանիշ է հանդիսանում տուժողին կամ նրա մերձավորին լրացուցիչ ուժեղ տանջանք կամ տառապանք պատճառելը:**

Քննարկվող սպանության տեսակի բնորոշ առանձնահատկությունն այն է, որ հենց դրա կատարման եղանակը հաճախ ակնհայտորեն վկայում է հանցավորի դրսևորած առանձին դաժանության մասին, որի արդյունքում տուժողին պատճառվում է անասելի ուժեղ, տևական, ֆիզիկական կամ հոգեկան տառապանք: Օրինակ՝ անձին կենդանի այրելը, կենդանի թաղելը, եռացող ջրի մեջ գցելը, բարձր ջերմային ռեժիմով շոգեբաղնիքում փակելը, սառնարանային պայմաններում պահելը առանձին դաժանության դրևորման եղանակներ են, որոնք իրենց մեջ կրում են հանցագործի դրսևորած անողորմության, անգթության, վայրագության, անասելի դաժանության հատկանիշներ: Նման անմարդկային և ստոր եղանակներով կատարված սպանությունները ենթակա են որակման որպես առանձին դաժանությամբ կատարված սպանություններ:

Լ.Լ. Կրուզիկովը արդարացիորեն պաշտպանելով առանձին դաժանությամբ կատարված սպանությունների «բաց ցուցակը», դրանց թվում նշում է տանջալիորեն գործող թույնի օգտագործումը, անձին ողջակիզելը, սննդից, ջրից կամ ջերմությունից տևական ժամանակով զրկելը, արյունահոսող տուժողին օգնություն ցույց տալուն խոչընդոտելն և այլն [5, էջ 32, էջ 20]:

Վ.Ս. Բեյլանի և Ն.Մ. Սվիդովի կարծիքով, եթե սպանությունը մեկ այլ անձի կյանքից զրկելն է, ապա առանձին դաժանությունը առաջին հերթին սպանության եղանակ է, որը բացառապես անհրաժեշտ չէ և ավելորդ է այլ անձին այդ եղանակով կյանքից զրկելու համար [6, էջ 26]:

Մ.Գ. Շարգորոդսկին նշել է, որ «*առանձին տանջալի բնույթը բնութագրական է նրանով, որ հանցավորը ոչ միայն ցանկանում է տուժողի մահը, այլև ցանկանում է հենց սպանության կատարման եղանակով նրան տանջանք պատճառել, այսինքն՝ եղանակ, որը մահվան առաջացման համար անհրաժեշտ չի համարվում*» [7, էջ 17-19]:

Նկատի ունենալով հանցագործության կատարման եղանակի և նրա տարատեսակ դրսևորումների տարածվածությունը ու գերակշիռ թվաքանակը առանձին դաժանությամբ կատարված սպանություններում, իրավաբանական գրականության մեջ փորձեր են կատարվել համակարգել առանձին դաժանությամբ կատարված սպանության եղանակները: Այսպես, Վ.Վ. Ստաշիսը, և Մ.Ի. Բաժանովը

առանձնացրել են այն եղանակները, որոնք ըստ իրենց, միշտ պետք է ճանաչել որպես տուժողի համար հատկապես տանջալի: Դրանք են՝ սպանությունը՝ ա) ողջակիզման միջոցով, բ) էլեկտրական հոսանքի օգտագործման միջոցով, գ) խոշտանգման եղանակով, դ) տուժողի գլխին և մարմնի այլ կենսական նշանակություն ունեցող մասերին ոտքերով և ձեռքերով տևական ժամանակ հարվածներ հասցնելու եղանակով վերջինիս հատուկ տառապանք պատճառելով [8, էջ 34]: Ակնհայտ է, որ սպանության կատարման եղանակի այս թվարկումը սպառիչ չէ: Մասնավորապես, ներգրավված չեն սպանության կատարման այնպիսի եղանակներ, ինչպիսիք են՝ ջրահեղձումը, անձին կենդանի թաղելը, տանջալիորեն ներգործող թույնի օգտագործմամբ կատարված սպանությունը, այլ ցավային զգացողություններ պատճառելով կատարված սպանությունը, դիակն անարգելը, բացառությամբ՝ հանցագործությունը թաքցնելու նպատակով դիակը ոչնչացնելու կամ մասնատելու դեպքերի և այլն:

Առանձին դաժանությամբ սպանություն կատարելիս հանցավորը կարող է օգտագործել տարբեր **միջոցներ և գործիքներ**, որոնք նյութական աշխարհի այնպիսի օբյեկտներ են, որոնց միջոցով վերջինս ընդլայնում է իր ֆիզիկական հնարավորությունները հանցագործության կատարման և հանցավոր նպատակին հասնելու համար: Առանձին դաժանությամբ սպանության կատարման համար որպես այդպիսի գործիքներ կարող են օգտագործվել տարբեր տեսակի դանակները, փայտե և ռետինե մահակները, աքցանները, կացինը, մետաղաձողը, փայտը, աղյուսը, հրագները և այլն: Հանցագործության կատարման միջոց կարող է հանդիսանալ էլեկտրական հոսանքը, ճառագայթումը, թույնը, սպիրտը, բենզինը, գրգռիչ ազդեցության և դյուրավառ այլ հեղուկները, ասեղները, տաք արդուկը և այլն:

Իրավաբանական գրականության մեջ կարծիքներ են արտահայտվել այն մասին, որ գործիքներն ու միջոցները չեն կարող հանդիսանալ օբյեկտիվ կողմի ինքնուրույն հատկանիշներ, որքանով որ նրանք հանդիսանում են հանցագործության կատարման եղանակ կամ հանդիսանում են հանցագործության կատարման եղանակի կառուցվածքային տարրեր:

Չնայած հանցագործության կատարման գործիքների և միջոցների սերտ փոխկապակցվածությանը և այն, որ **երբեմն հանցագործության գործիքներն ու միջոցները հանդես են գալիս որպես սպանության կատարման եղանակ**, օրենսդիրը հանցագործության կատարման գործիքներին, միջոցներին ու եղանակին տալիս է ինքնուրույն բնութագիր, դրանով իսկ ճանաչելով նրանցից յուրաքանչյուրին

որպես հանցագործության օբյեկտիվ կողմի ինքնուրույն ֆակտուրատիվ հատկանիշ:

Ինչպես հանցագործության կատարման եղանակի դեպքում, այս պարագայում նույնպես, հանցավորի կողմից այս կամ այն միջոցի կամ գործիքի օգտագործումը կարող է էականորեն ազդել արարքի հանրային վտանգավորության աստիճանի վրա: Ունեձգության կատարման եղանակը, հանցավորի կողմից կիրառված գործիքներն ու միջոցները, նրանց քանակը, տեղակայումը, խոցելիության կամ ոչնչացնող հատկանիշները կարող են վկայել ինչպես դրսևորած բռնության, այնպես էլ հանցավորի հանրային առավել վտանգավորության աստիճանի մասին:

Քենարկվող հանցակազմի բնորոշ առանձնահատկությունն այն է, որ հենց հանցագործության կատարման եղանակը հաճախ վկայում է հանցագործության կատարման առանձին դաժանության մասին:

Օրինակ՝ տուժողի վրա բենզին լցնելու և հրկիզելու եղանակով կատարված սպանությունը հանդիսանում է առանձին դաժանությամբ կատարված սպանություն, որքանով որ սպանության կատարման այդ եղանակով տուժողին միաժամանակ պատճառվում է բացառիկ ուժեղ և տևական ֆիզիկական տառապանք: Նույնը վերաբերում է տաք արդուկի օգտագործման միջոցով կատարված սպանությանը և այլն: Բոլոր այս դեպքերում, հանցավորը իր և տուժողի համար ակնհայտ գործել է առանձին դաժանությամբ, տուժողին առանձին տանջանքներ և տառապանք պատճառելը ընդգրկված են եղել հանցավորի դիտավորությամբ: Այսինքն, առանձին վերցրած, միայն սպանության կատարման եղանակը, առանց հանցակազմի օբյեկտիվ կողմի հաշվառման չի կարող հիմք հանդիսանալ արարքը որպես առանձին դաժանությամբ կատարված սպանություն որակելու համար: Օրինակ՝ բազմաթիվ մարմնական վնասվածքները ինքնին, առանձին վերցրած, չեն կարող հիմք հանդիսանալ արարքը որպես առանձին դաժանությամբ կատարված սպանություն որակելու համար: Որպես կանոն, առանձին դաժանությունը բացակայում է, երբ բազմաթիվ վնասվածքները հասցվել են ժամանակի կարճ հատվածում՝ մահն արագացնելու նպատակով: Այսինքն՝ բազմաթիվ վնասվածքներ հասցնելու փաստը չի կարող առանձին դաժանությունը սպացուցող միակ պայմանը լինել, առանց հանցավորի առանձին դաժանությունը վկայող դիտավորության առկայության:

Չնայած իր մեծաքանակ բնույթին, սպանության կատարման եղանակը առանձին դաժանությամբ կատարված սպանության օբյեկտիվ կողմի միակ հատկանիշը չէ: Օբյեկտիվ կողմից առանձին դաժանությունը կարող է պայմանավ-

որված լինել նաև հանցավորի կողմից առանձին դաժանությունն ցուցաբերելը վկայող այլ հանգամանքներով:

Դատական պրակտիկայում հաճախ հանդիպում են դեպքեր, երբ հանցավորի գործողությունները մի դեպքում դիտվում են որպես առանձին դաժանությամբ սպանության կատարման եղանակ, մյուս դեպքում՝ այդ նույն գործողությունները՝ որպես հանցավորի կողմից առանձին դաժանություն ցուցաբերելը վկայող այլ հանգամանքներ:

Տուժողին անարգելը, ստորացնելը կամ մոտալուտ մահվան գիտակցմամբ պայմանավորված այլ նվաստացումները և դրանց արդյունքում նրան ուժեղ ֆիզիկական և հոգեկան տանջանքներ և տառապանք պատճառելը առանձին դաժանության դրսևորումներ են, որտեղ թե սպանության կատարման եղանակը, և թե հանցավորի առանձին դաժանությունը վկայող այլ հանգամանքները կարող են համատեղվել և զուգորդվել:

Տվյալ դեպքում արարքի որակման հարցում որևէ տարբերակում չի կարող լինել առանձին դաժանությունը բնութագրող երկու հավասարարժեք հանգամանքների՝ հանցագործության կատարման առանձին դաժան եղանակի և առանձին դաժանությունը վկայող այլ հանգամանքների արդյունքում տուժողին և (կամ) մերձավորներին առանձին տանջանք և տառապանք պատճառելու մեջ:

Առանձին դաժանությամբ կատարված սպանության անմիջական օբյեկտը հանդիսանում է անձի կյանքը: Մի շարք հեղինակների կարծիքով այս հանցագործության մեջ որպես ֆակտորտատիվ (յրացուցիչ) օբյեկտ է հանդիսանում անձի արժանապատվությունը: Արժանապատվությունը բարձրագույն արժեք է, մարդու անօտարելի բնական իրավունքը: Անձի արժանապատվությունը և վերջինիս անձեռնմխելիությունը, որպես սահմանադրական սկզբունք ամրագրված է բազմաթիվ երկրների սահմանադրություններում: Մասնավորապես, Գերմանիայի Դաշնության Սահմանադրության 1-ին հոդվածի 1-ին կետն ամրագրում է, որ մարդու արժանապատվությունն անձեռնմխելի է: Դրա պաշտպանումը և հարգումն ամեն մի պետական իշխանության պարտականությունն է: Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունը նույնպես արժանապատվությունը ընդունում է որպես բարձրագույն և անօտարելի արժեք [9, էջ 65-66]:

Արժանապատվությունը մարդկային հատկանիշ է, որը հավասարազոր է հարգվելու իրավունքի և ուրիշներին հարգելու պարտականության: Այն ձեռք է բերվում այն ժամանակ, երբ մարդն սկսում է արժևորել իրեն, գնահատել իր վարքագիծը, իր տեղը հասարակության մեջ,

ինչպես նաև գնահատել հասարակության կողմից իրեն արժևորելը: Ինչ վերաբերվում է անձի արժանապատվության ստորացմանը, ապա դա անձի նվաստացումն է, նսեմացումը, նրա բարոյական հեղինակության ոտնահարումը, որը դրևորվում է մարդու ներաշխարհը խորությամբ վիրավորող, անարգող, վարկաբեկիչ գործողություններով և այլն: Ստորացման թվին են դասվում, օրինակ՝ մարդուն մերկացնելը, նրա վրա թթելը, նրա մարմնին անպարկեշտ հայումները, ծաղրուծանակի ենթարկելը և այլն:

Ինչպես նկատել է Յու. Մ. Անտոնյանը «առանձին դաժանությամբ կատարված սպանության ժամանակ կարծես կատարվում է կրկնակի ոչնչացում՝ սկզբում անձի անհատականության, ապա մարդու՝ որպես ֆիզիկական օբյեկտի» [10, էջ 155-156]: Փաստորեն, նման դեպքում, հանցավորը կանխամտածված կերպով առաջին հերթին վնաս է պատճառում տուժողի արժանապատվությանը, ապա նոր կյանքին: Մակայն, երբեմն էլ հենց տուժողի արժանապատվության ստորացումը կարող է դառնալ կյանքից զրկելու եղանակ, օրինակ՝ տուժողին ցցի, դաշույնի, մետաղաձողի կամ տարբեր այլ առարկաների վրա նստեցնելու եղանակով կատարված սպանության դեպքում, որտեղ գործ ունենք ինչպես տուժողին ուժեղ ֆիզիկական ցավ, կյանքի հետ անհամատեղելի վնասվածքներ պատճառելու հետ, այնպես էլ վերջինիս անձի վարկաբեկման, արժանապատվության ստորացման հետ:

Առանձին դաժանությունը կարող է համարվել նաև հաջորդ գոհի ներկայությամբ կատարված սպանությունը, երբ հանցավորը նախատեսել է, գիտակցել իր գործողություններով վերջինիս հատուկ ցավ և տառապանք պատճառելը:

Առանձին դաժանությամբ կատարված սպանություն է նաև դանդաղ և տանջալիորեն ազդող թույնի օգտագործման միջոցով կատարված սպանությունը:

Առանձին դաժանությամբ կատարված սպանությունների թվին է դասվում նաև հանցավորի կողմից տուժողին կյանքի համար վտանգավոր վնասվածքներ պատճառելը և միաժամանակ խոչընդոտելը՝ այլ անձանց տուժողին որևէ օգնություն ցուցաբերելուն:

Առանձին դաժանությամբ կատարված սպանության եղանակ կարող է հանդիսանալ նաև տուժողի նկատմամբ կիրառված բռնությունների տևական բնույթը, երբ հանցավորը գիտակցել է, որ իր գործողություններով տուժողին հատուկ տառապանք է պատճառում:

Առանձին դաժանությամբ կատարված սպանության եղանակ է հանդիսանում նաև տուժողին սննդից, ջրից զրկելու, հիվանդին բժշկական օգնություն ցուցաբերելը թույլ չտալու եղանակով կատարված սպանությունը:

Առանձին դաժանությամբ կատարված սպանությունների թվին կարող է դասվել նաև բռնությամբ ջրախեղդ անելը, ինչպես նաև տուժողին կապկպելու կամ նրա վրա ծանրություն կապելով ջրախեղդ անելու եղանակով կատարված սպանությունը:

Առանձին դաժանությամբ կատարված սպանության եղանակ է հանդիսանում նաև դիակն անարգելը, բացառությամբ հանցագործությունը թաքցնելու նպատակով դիակը ոչնչացնելու կամ մասնատելու դեպքերի:

Այս և նմանատիպ բոլոր դեպքերում ակնառու է հանցավորի կողմից իր գործողությունների առանձին դաժան բնույթի գիտակցումն ու ընկալումը, առանց որի արարքի որակումը որպես առանձին դաժանությամբ կատարված սպանություն հնարավոր չէ: Ինչպես նկատել է հայտնի ռուս իրավագետ Ս.Վ. Բորոդինը *«սպանության դեպքում առանձին դաժանության համար բավարար է պարզել, որ հանցավորը սպանություն կատարելիս գիտակցել է իր գործողությունների առանձին դաժան բնույթը»* [11, էջ 55]: Նկատենք նաև, որ ՀՀ և ՌԴ քրեական օրենսգրքերի համաձայն դիտավորյալ հանցագործության ծանրացնող հանգամանքների համար անձը ենթակա է քրեական պատասխանատվության, եթե նա գիտակցել է այդ հանգամանքները: Այս ամենով հանդերձ դատական բարձրագույն ատյանը *«Սպանությունների գործերով դատական պրակտիկայի մասին»* որոշումներում պարզաբանել է, որ առանձին դաժանությունը կապվում է ինչպես սպանության կատարման եղանակի, այնպես էլ հանցավորի առանձին դաժանությունը վկայող այլ հանգամանքների հետ: Դատական բարձրագույն ատյանը ամրագրել է նաև, որ արարքը առանձին դաժանությամբ կատարված սպանություն որակելու համար անհրաժեշտ է պարզել տուժողին առանձին դաժանությամբ սպանելու հանցավորի դիտավորությունը:

Փաստորեն, ինչպես արդեն նկատել ենք, այս բնույթի հանցագործությունների քննության ընթացքում իրավասու մարմինները պետք է ղեկավարվեն ինչպես օբյեկտիվ՝ այն է՝ հանցագործության կատարման եղանակը և այլ օբյեկտիվ հանգամանքները բնութագրող չափորոշիչներով, այնպես էլ սուբյեկտիվ՝ սպանությունը առանձին դաժանությամբ կատարելու հանցավորի դիտավորությունը բնութագրող չափորոշիչներով:

Որքան էլ առաջին հայացքից այդ չափորոշիչները թվան հստակ, պարզ և հասկանալի, այնուհանդերձ, ինչպես արդեն նկատել ենք, դրանք այնքան էլ պարզ և հստակ կամ հասկանալի չեն, հենց միայն թեկուզև այն պատճառով, որ քննարկվող հանցակազմի հիմնական հատկանիշները չունեն օրենս-

դրական ամրագրումներ և արարքի գնահատման հիմքում, վերջին հաշվով, դրվում է անձի՝ իրավակիրառի սուբյեկտիվ մոտեցումը, իսկ այն ինչպես նկատել ենք՝ միանշանակ չէ: Իհարկե հարցի լուծումը համեմատաբար հեշտացել է գործնականում առավել տարածում ստացած եղանակներով և իրավիճակներով պայմանավորված սպանությունների վերաբերյալ գործերով դատական բարձրագույն ատյանի կայացրած նախադեպային որոշումների արդյունքում: Սակայն, միաժամանակ պետք է նաև նկատել, որ նշված միասնական լուծումները հիմնականում վերաբերում են առավել հաճախ հանդիպող, առանձին դաժանությունը վկայող առավել տիպիկ դրևորումներին, որի դեպքում հանցագործության կատարման եղանակը, ինչպես նաև հանցավորի առանձին դաժանությունը վկայող այլ հանգամանքները ինքնին վկայում են հանցավորի առանձին դաժանության դրսևորման մասին: Մասնավորապես, առանձին դաժանության մասին կարող են վկայել սպանության այնպիսի եղանակը, որը հանցավորի համար ակնհայտորեն կապված է տուժողին հատուկ տառապանք պատճառելու հետ:

Փաստորեն, տուժողի առանձին տառապանքը պայմանավորված հանցագործության կատարման եղանակով, ըստ դատական բարձրագույն ատյանի որոշման հանդիսանում է առանձին դաժանությամբ կատարված սպանության օբյեկտիվ հատկանիշ: Իսկ որոշնք են տուժողի առանձին տառապանքի այն չափանիշները, որոնք կարող են հիմք հանդիսանալ որպեսզի սպանությունը ճանաչվի առանձին դաժանությամբ կատարված: Իրավաբանական գրականության մեջ տարբեր կարծիքներ են արտահայտվել կապված ինչպես առանձին տառապանքի պատճառման, այնպես էլ՝ վերջինիս ընկալման հետ: Կարծում ենք, այդպիսին կարող է հանդիսանալ այն տառապանքը, որը պատճառվել է մահվան առաջացման համար ոչ անհրաժեշտ և այդ շրջանակից դուրս տուժողին հատուկ տանջանք և տառապանք պատճառող հանցավորի դիտավորյալ գործողություններով: Այսինքն, կատարման եղանակով պայմանավորված, սպանությունը համարվում է առանձին դաժանությամբ կատարված, երբ հանցավորը անձին կյանքից զրկելով, միաժամանակ նրան կամ նրա մերձավորին գիտակցաբար պատճառում է մահվան հետևանքի առաջացման համար ոչ պարտադիր, դրա շրջանակից դուրս, առանձին, հավելյալ, լրացուցիչ, ուժեղ, տևական ծանր ֆիզիկական և (կամ) հոգեկան տառապանք:

Օգտագործված գրականության ցանկ

1. **Трайнин А. Н.** Избранные труды. / Составление, вступительная статья **Н. Ф. Кузнецовой.** – СПб, Юридический центр «Пресс». 2004.

2. Кузнецов А. П., Степанов М. В., Ситникова М. Л. Толкование пленумов Верховного Суда РФ уголовного законодательства об ответственности за хищения. – Ростов-на-Дону 2003.
3. Кудрявцев В. Н. Объективная сторона преступления. – М. 1960.
4. Якубович О. Р. Способ совершения преступления и его уголовно-правовое значение. Дисс... к.ю.н. – М. 2004.
5. Уголовное право России. Часть особенная: учебник для вузов. / отв. ред. Л. Л. Кругликов, – М. 2004, Кругликов Л. Л. Преступления против личности. – Ярославль. 1998.
6. Беляев В. Г., Свидлов Н. М. Вопросы квалификации убийств. – Волгоград. 1984.
7. Стельмах Т. А. Проблемы теории и судебной практики квалификации убийства по признаку особой жестокости. // «Российский судья». 2010. №10.
8. Сташис В. В., Бажанов М. И. Пресупления против личности в УК УССР и судебной практике. – Харьков, 1987.
9. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության մեկնարանություններ, ընդհանուր գիտական խմբագիր Գ. Գ. Հարությունյան: – Եր. 2010.
10. Антонян Ю. М. Преступная жестокость: монография. – М. 1994.
11. Бородин С. В. Квалификация убийств. – М. 1963.

Տճանա/Հանձնվել է՝ 15.07.2021

Րեցենզրվանա/Գրախոսվել է՝ 20.07.2021

Մրնյա/Ընդունվել է՝ 23.07.2021